

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԱ.

24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880



Կ. ՊՕԼԵՍ

1880

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
Յ ԳՈՎ-ԳԱԲՈ., Պատրիարքարանի փողոց Յ

ԴԻԻԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅԻ ԴԻԻԱՆ

Սէրվիլէն էֆէնտի	Ա. Ա. Կ. Ե. Կ. Ե. Կ.
Յ. Մէրեւէմ-Գուլի էֆէնտի	Բ. »
Միքայէլ էֆէնտի Մամիկոնեան	Գ. »
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան	Ա. Ա. Կ. Ե. Կ. Ե. Կ.
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Բ. »
Միհրան էֆէնտի Չօպանեան	Գ. »

Ձեռնաստրեան դիւան

Տարաբերութեան դիւան

Յ. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրլեան  
Հովհաննէս Քահանայ Մկրեան  
Պապի էֆէնտի Պապօեան

Գարեգին էֆէնտի Մելիքեան  
Միհրան էֆէնտի Չօպանեան  
Նշան էֆէնտի Օտեան

Դաստիակութեան դիւան

Իրաւաստրեան դիւան

Յարութիւն էֆէնտի Թիւլեան  
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան  
Տօքթոս Ռափաէլեան էֆէնտի

Տ. Ներսէս վարդապետ Ասլանեան  
Տելեմար էֆէնտի Էքսէրճեան  
Լօղօֆէթ էֆէնտի Պալեօղեան

Կարուածոց դիւան

Նախաձեռնութեան դիւան

Աւետիա էֆէնտի Կիրաաղեան  
Քարսեղ էֆէնտի Հալաճեան  
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան

Տիգրան էֆէնտի Եռուսփեան  
Ղազար էֆէնտի Հովուեան

Համարակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Յակոբ էֆէնտի Արշակ  
Պօղոս էֆէնտի Թորգոմեան

Կարապետ էֆ. Խլիւճեան  
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան  
Աբրահամ էֆէնտի Մուրատեան

Բ Բացակայութիւն առաջին  
Բ.2 Բացակայութիւն երկրորդ  
Բ.9 Բացակայութիւն ստանձառու

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄ 1880 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ժ Ա.


24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1880

ՆՈՒՈՂԱՀ. — Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առժամեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եռուսփեան ( » » )

ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	ՄՈՒՍՏԱՅԻՆ (Ա. Վ. իճակ)	47 Յ. Շիշմանեան Տօքթօր Բ 9
Ա. Վ. իճակ	Գումգաբու, Կետիկ փաշա Է. Գումգաբուի դուրս	48 Իսկիւտար Ս. Կարապետ
1 Կարապետ Եպս. Սերոբեան Բ	21 Գրիգոր Պէրպէրեան Բ	49 Միհրան Պահճէգափուլն Բ 2
2 Սիմոն Եպս. Սէֆէրեան Բ	22 Գէորգ Ստիմարաճեան Բ	50 Պօղոս Թորգոմեան Բ 3
3 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ	23 Խաչիկ Մանկասարեան Բ 10	51 Նիկողոս Այաճաճեան
4 Կարապետ Ք. Սէթեան	24 Կարապետ Աղաբաճաճեան	52 Տրդատ Փափաղեան Բ 3
Բ. Վ. իճակ	25 Համբարձում Մազպուլեան Բ 5	( Գ. Վ. իճակ )
5 Մատթէոս Եպս. Իզմիրլեան	26 Մինաս Գափամաճեան	Գասըմ բաշա
6 Պօղոս Վ. Խօրտամեան	27 Ն. Մէղպուրեան Տօքթօր Բ 4	53 Գասպար Չէրաղ Բ 2
7 Յովհաննէս Ք. Մկրեան	28 Մարգիս Աղաբէկեան Բ 9	Բերա
8 Գրիգոր » Աճէմեան	29 Սահակ Ապրօ Բ 9	54 Աբիկ Ունճեան Բ 9
Գ. Վ. իճակ	30 Սենեքերիմ Մանուկեան Բ 10	55 Գրիգոր Սէլիմիէճեան
9 Յակոբ » Ա. Փափաղեան Բ	31 Բարթող Քիւրքճիւլաչեան Բ 3	56 Գրիգոր Օտեան Բ 9
10 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ 9	32 Ատովմ Տէրոյէնց Բ 11	57 Սէրվիլէն Բ 11
11 Խորէն » Փէլիվանեան	33 Գէորգ Ապտուլաչեան Բ	58 Ռափայէլեան Տօքթօր Բ 11
42	34 Յ. Մէրեւէմ-Գուլի Բ 9	59 Միքայէլ Մօմճեան Բ 11
Գ. Վ. իճակ	35 Աւետիս Կիրաաղեան Բ 11	60 Կարապետ Քաղաղեան Բ 11
43 Ներսէս Վ. Ասլանեան Բ 11	36	61
44 Սուքրաս Ք. Ստեփանեան Բ 9	37	62
45 Վրթանէս » Պալեան Բ 11	( Բ. Վ. իճակ )	Միջագիւղ
46	Պէլիկալ	63 Յակոբ Նորատուկեան Բ
Ե. Վ. իճակ	38 Անդրանիկ Կրճիկեան Բ 7	64 Տիգրան Եռուսփեան
47 Խորէն Արքե. Նար Պէլ Բ 9	39 Ալիքսան Խօրասանճեան Բ 11	65 Մկրտիչ Գազանճեան Բ 3
48 Յովհաննէս Վ. Փափաղեան	40 Բարսեղ Հալաճեան Բ 2	66 Նշան Օտեան Բ 5
49 Գարեգին » Թաթարեան Բ	Եկեղիզաբու.	67
20	41 Մկրտիչ Քիւրքճիւլաչեան	Պէլգօգ Է. Ղալաբիա
Բ Բացակայութիւն առաջին	42 Սեպուհ Մազպուլեան Բ 11	68 Միքայէլ Մամիկոնեան
Բ.2 Բացակայութիւն երկրորդ	43 Մարուգէ Յրէնկեան Բ 2	( Գ. Վ. իճակ )
Բ.9 Բացակայութիւն ստանձառու	44 Պօղոս Էքսէրճեան Բ	Քուզկուճուգ Է. Իճափե
	Իսկիւտար Ս. Խաչ	69 Յովհաննէս Էսաեան Բ 11
	45 Սիմոն Ֆէլէկեան Բ 1	70 Ստեփան Պէլիկճեան Բ 3
	46 Ստեփան Ասլանեան Բ 1	



Գատըզիւղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահպաղեան Բ 7	Կարին	121 Սանդիան փափաղեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ 10	101 Սիմոն Մազսուտեան Բ 4	Տիվրիկ
Նարյըգաբու	Քեօրանեա	122 Նշան Գարադաշ Բ 2
73 Յակոբ Եղմէնիճեան Բ	102	Զէյբուն Է. Մարաշ
Եկնիմահալիկ Սամարիոյ	Անդրիանուպօլիս	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 14	103 Վրչէն Ապտուլլահ Բ 4	Տրապիզօն
Թօփգափու	Նիկոմիդիա	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 11
75 Յովհաննէս Մարգարեան	104 Կարապետ Ս. Իւթիւճեան	Պաղտատ
Էլուպ Ս. Եղիա Է. Ա.	Ակն	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 11
Աստուածածին	105 Աւետիս Պարոնեան Բ 3	Տիգրանակէրտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	Ղարահիսար	126 Մինրան Զօսյանեան
Գուրուհէշմի	106	Վան
77 Ասափա Իկիտպաշեան	Արաբկիր	127
Հիսար Է. Պօյաճի ցիւղ	107 Կարապետ Խաչիկեան	Աղբամար
78 Յովհաննէս Արշակունի Բ 11	Բաղէշ	128
Նոր ցիւղ Է. Սրէնիա	108	Հայկալ Է. Այնթապ
79 Ղազար Հովուեան	Պրուսա	129
Պալատ	109 Քրիստոստուր Ղազարոսեան	Սեբաստիա
80 Յովհաննէս Կրճիկեան Բ 8	Եւդոկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Տեղեմաք Էքսէրճեան Բ	Ամասիա	Ռուսճուգ
82	111 Համբարձում Ալաճաճեան Բ 2	131
Քարակեօմրիկ	Բալու	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան Բ 3	112 Յովհաննէս Աղնաւորեան Բ 9	132 Աբրահամ Յ. Այվաղեան
84	Եղեսիա	Զմշկածագ
(Ե. Վրճակ)	113 Յակոբ Իւթիւճեան	133 Համբարձում Սարըքէշիշեան
Սամարիա	Մանճըլըլս	Գաղատիա
85 Ալիքսան Պէշիքեան	114	134
86 Եղիազար Մէլիքեան Բ	Հաճըն	Ատանա
87 Մինաս Ճաֆճաֆեան Բ	115	135
88 Նազարէթ Շահպաղեան	Երզնկա	Սղեբղ
89 Յարութիւն Թիւրեան Բ 3	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ	136 ատթէոս Ալէքսանեան Բ 2
90 Յակոբ Արշակ Բ 3	Թէքիրտաղ	Եօզղատ
91 Սեպուհ Թիւրսիւղեան Բ 9	117 Տիգրան Գ. Սինանեան	137 Լօղօֆէթ Պալեօղեան Բ
92	Կեսարիա	Մալաթիա
93	118 Գէորգ Գըլըճճեան Բ 2	138 Գէորգ Վարդանեան Բ 2
94	Թարբերղ	Իզմիր
Խասգիւղ	119	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիրրի Բ 2	Պալըքսէր	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէշիկճեան Բ	120	140 Աբրահամ Մուրատեան
97 Սարգիս Աբրահամեան Բ 11		
98		
99 Սարգիս Քափուճեան Բ 11		
100 Աթանազիւն Արապեան		

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Հրաժարում Մայր դիւանի անդամոց և ընտրութիւն .  
 Բ. Խնդիր տեղափոխութեան ժողովարանի և բացակայութեան Երեսփոխանաց. — Տեղեկագիր Յանձնախմբին :

## ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ի բացակայութեան Ամենապատիւ Սըրբազան Պատրիարք Հօր և Ատենապետաց Մայր Դիւանի, առժամեայ նախագահութեամբ Արժ. Տ. Պօղոս վարդապետի Խօլտամեան Պատրիարքական փոխանորդին, եւ առժամեայ Ատենապետութեամբ Ք. Ղազարոսեան էֆէնտիի՝ երեսփոխանաց երիցագունին, առեանը բացուեցաւ ժամ 8 1/2 ին, ի ներկայութեան 22 երեսփոխանաց, որոց թիւն 35 ի յանդեցաւ ի վերջէ :

1. Վաւերացումն նախընթաց է. նստի ատենագրութեան :

Ատենապետ էֆէնտին յայտարարելով թէ ժողովին նախընթաց է. եւ Ը. նիստերու առեանագրութիւնները տպագրեալ հաղորդուած են արդէն Երեսփոխանաց, զիտողութեան ենթարկեց նախ է. նիստի առեանագրութիւնը, եւ տեսնելով որ Երեսփոխաններէն զիտողու-

թիւն յայտնող չկայ, յարեց թէ ինք միայն զիտողութիւն մ'ունի, եւ յաւելցուց .

« Գափամանեան էֆէնտի երբ դռնփակի առաջարկութիւն ըրաւ, (Տես Երես 149) ես ալ ձայնակցեցայ անոր ըսելով թէ՛ դռնփակ ըլլայ, որպէս զի առեանագրանք համարձակ խօսին » : Այս պարբերութիւնը չէ նշանակուած առեանագրութեան մէջ :

Ուրիշ զիտողութիւն տեղի չունենալով Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ է. նստի Ատենագրութիւնն, եւ իւր զիտողութեամբն հանդերձ ընդունուելով ՎԱԻԵՐԱՅԱԻ ժողովէն :

Յետոյ Ատենապետ էֆէնտին ի զիտողութիւն հրաւիրեց զԵրեսփոխանս Ը. նստի Ատենագրութեան վրայ :

2 ԱՅՆԵՐ — Դեռ հիմայ ստացանք Ատենագրութիւնը եւ ժամանակ չունեցանք կարգալու :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ. — Երկու ժամ է որ առած ենք Ատենագրութիւնը, ես կարգացի ու պակաս մը չգտայ իմ մասերու մէջ՝

կառավարիկեմ որ վաւերացումը քուէի գրուի

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին Ը. նստի Ատենագրութեան այսօր վաւերանալու կամ չվաւերանալու մասին ժողովին կամքը հարցնելով, ժողովը 1 քուէի դէմ միաձայնութեամբ ՈՐՈՇԵՑ յաջորդ նստին թողուլ անոր վաւերացումը :

2 .

Սեբաստիոյ Թուղլասար գիւղի պանդուխտ ժո. դովրդեան հանրագիրը .

Ատենապետ էֆէնտին ժողովին ներկայեց յետագայ հանրագիրն, որ ըստ կանոնի արձանագրեալ եւ տօմարագրեալ էր ՚ի Պատրիարքարանի, ինչպէս նաեւ համառօտագրեալ անոր պարունակութիւնը, որ ահաւասիկ :

Սեբաստիոյ Թուղլասար գիւղի պանդուխտ ազգայինք ներկայ ազերսագրով իրենց հայրենիքը գտնուող Յարութիւն եւ Պողոս Յակովբեան երկու եղբարց հարստահարութեանց եւ բաղմագիւմի վնասուց դէմ զորս մի առ մի կը յիշատակեն, բողոք կը բառնան, եւ լալաղին աջօք Ազգային ժողովոյ անմիջական տնօրէնութիւնը կը խնդրեն, յայտնելով միանգամայն թէ՛ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը չորս ամիս առաջ իրենց խնդրագիրը զոր ներփակեալ կը մատուցանեն Ազգային ժողովոյ, Սեբաստիոյ դաւաճական վարչութեան միջոցաւ քննութեան ենթարկելով, Յակովբեան եղբարց չարիքներն եւ անօրէնութիւնները հաստատուեր, սակայն այս մասին ցարդ տնօրէնութիւն մը չէ եղեր :

Համառօտութիւնը կարգացուելէ ետեւ, Երեսօրհանաց ոմանց առաջարկութեամբ եւ ժողովին հաւանութեամբ ամբողջ հանրագիրն ու ներփակեալ տեղեկագիրն ալ կարգացուցան :

( Յետ ընթերցման )

ԳԱՓԱՄԱՃԵԱՃ Մ. ԷՅ . — Անշուշտ այս գրութեանց ընթերցումն ինչպէս իմ, նոյնպէս ամենուդ վրայ ալ գէշ տուաւ որութիւն ըրաւ, մանաւանդ անոր համար՝ որ յիշատակուած չարիք հայ հարստահարչաց կողմէ տեղի ունեցած են : Ես իսկ փորձով տեսած եմ զանազան դաւաճաց մէջ եւ կրնամ հաստատել հայ ջօրպահիներու գէշութիւնները . բայց չեմ ուղեր հոս խօսիլ անոնց վրայ : Այլ միայն կառավարիկեմ յղել սոյն գրերը Ս . Պատրիարք Հօր եւ վարչութեան ի պատշաճ տնօրէնութիւն, պայմանաւ որ արդիւնքը հաղորդուի ժողովոյս : Կառավարիկեմ նաեւ որ սոյն կարգացուած գրերը չանցնին ատենագրութեան մէջ, միանգամայն լրագրաց մէջ ալ չհրատարակուին :

ԲԱՆԻ ՄԸ ԶԱՅՆԵՐ . — Կը կրկնենք :

ՄԷԼԻԻՔԵԱՆ Գ. ԷՅ . — Կը համաձայնիմ Գափամաճեան էֆէնտի առաջարկին, փորձի բարեփոխութեամբ մը . այսինքն՝ փոխանակ ըսելու որ արդիւնքը հաղորդուի ժողովոյս, յանձնարարութիւն լինի վարչութեան որ փութով եւ անմիջապէս զարժանն տնօրէնէ այս մասին :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՅ . — Ես ալ նոյնը պիտի առաջարկէի . ստիպողական կերպով յանձնարարուի վարչութեան, որ անմիջապէս քննութեան առնու խնդիրն այնպէս որ վճռական արդիւնք մ'ունենայ :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ . — Եթէ արդիւնքըն հոս հաղորդուի ըսի, պատճառն այն էր որ ստիպողականութիւն տալ կուզէի խնդրոյս :

ՄԷԼԻԻՔԵԱՆ Գ. ԷՅ . — Շատ աղէկ . համաձայն ենք ամենքս :

ԶԱՅՆԵՐ . — Քուէ, քուէ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Գափամաճեան էֆէնտի առաջարկին առաջին մասը . եւ ժողովը միաձայն կ'ընդունի վարչութեան յղել խնդիրը յանմիջական տնօրէնութիւն :

Ատենապետ էֆէնտին նոյնպէս քուէի կենթարկէ Գափամաճեան էֆէնտի առաջարկութեան երկրորդ մասն ալ, որ է խնդրոյն համառօտագրութիւնը միայն անցնել Ատենագրութեան մէջ :

Ժողովը կ'ընդունի զայն միաձայնութեամբ եւ կանցնի Օրակարգին :

Այս միջոցին Դեր—Ատենապետ Մէրեէմ — Գուլի էֆէնտին կը մտնէ ժողովարան եւ կանցնի իր պաշտօնին գլուխը :

ՕՐԱԿԱՐԳ

Ա.

Հրատարում Մայր դիւանի անդամոց եւ ընտրութիւն :

ԱՏՆԱՊԵՏ ԷՅ . — Օրակարգին առաջին խնդիրն է Հրատարում Մայր դիւանի անդամոց եւ ընտրութիւն : Թէեւ ժողովը բաւական թիւ չունի, որպէս զի վիճաբանութիւնը կարենան որոշման մը յանգիլ, այսու ամենայնիւ Մայր դիւանի անդամոց հրատարման կէտը պէտք է ձեռք առնուք, որոյ մասին նախապէս տեղեկութիւններ ունիմ ժողովիդ հաղորդելու :

Կը յիշէք որ ասկէց առաջ յանձնարարութիւն մ'ըրած էիք ինձ՝ Սրբազան Պատրիարք Հօր դիմել եւ տեղեկութիւն ստանալ Մայր դիւանի անդամոց հրատարման վրայ : Չեր այս յանձնարարութիւնը ժամանակին կատարելով պէտք եղած տեղեկութիւնն ստացեր էի, սակայն կարծօրեայ ճամբորդութեան մը պատճառաւ չկրնալով նոյն տեղեկութիւնն անձամբ բերել, գրաւոր կերպով հաղորդեր էի Դեր—Ատենապետ պաշտօնակցիս Վամիկոնեան էֆէնտիին, ժողովոյդ ներկայելու համար : Այդ գիրն՝ ինչպէս հիմա կ'իմանամ, տակաւին չէ ներկայացած ժողովոյդ . ուստի պէտք է նախ զայն կարգամ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին կ'ընթեռնու յետագայ գրութիւնը :

Վսեմադատիւ Ատենապետ Ազգային ժողովոյ

Մայր դիւանի անդամոց հրատարման մասին ժողովս իւր նախընթաց նիստին մէջ ինձ յանձնարարած էր բանակցել Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր հետ եւ այդ հրատարմանց վիճակն ստուգելով տեղեկութիւն բերել իրեն :

Պատկառելի ժողովոյն այս յանձնարարութիւնը կատարած ըլլալով, ըստ որում այսօր չեմ կարող նիստին ներկայ գտնուիլ, գրաւորապէս կուգամ ՚ի գիտութիւն բերել ժողովին, թէ Ս. Պատրիարք Հայրն՝ ըստ որոշման ժողովոյ՝ յորդորական գիր ուղղեր է առ հրատարոցս եւ իրենց ազգասիրութեան կոչում է ըրեր : Բայց հրատարողներուն հինգն ալ պնդեր են իրենց հրատարականին վրայ եւ անոնցմէ Պէրպէրեան էֆէնտի կրկին հրատարագիր մ'ալ մատուցեր է, որ Ատենական դործողութեանց վերաբերեալ

Թղթոց մէջ է : Եւ թէպէտ բաց ի Սէր-  
վիլէն էֆէնտիէ միւսները երբեմն առ-  
ժամանակեայ կերպիւ պաշտօն վարեր են  
դիւանին մէջ, բայց իրենց հրաժարակա-  
նը յետս չեն կոչեր . որով հրաժարմանց  
խնդիրն իւր նախկին վիճակէն փոփոխու-  
թիւն մը չէ կրած :

Հետեւաբար Ժողովէն ընդունած  
յանձնարարութիւնս անթերի կատարելու  
համար, «Հրաժարում Մայր Դիւանի ան-  
դամոց և ընտրութիւն» անուամբ անցը-  
նել տուած եմ խնդիրն Օրակարգին մէջ,  
որպէս զի Ժողովն ըստ օրինի կարենայ  
այսօր վերջնականապէս տնօրինել զարժա-  
նըն այս մասին :

Կը փութամ յայտնել նաև թէ Մայր  
Դիւանն հաղորդած է վարչական կազմա-  
կերպութեան նորոգ քուէարկեալ օրէն-  
քն առ Ամենապատիւ Ս. Պատրիարք հայ-  
րն և յուսալից է որ Ն. Սրբազնութիւնն  
անյապաղ կարգելով նոր խորհրդական-  
ներն կը ներկայէ Ազգային Ժողովոյն :

26 Սեպտեմբեր 1880

Կ. Պոլիս

Դեր-Ատենապետ  
Յ. ՄԷՐԵՏԻՄ-ԳՈՒԼԻ

Եւ յետ ընթերցման կը շարունակէ :

Պէրպէրեան էֆէնտի կրկին հրաժարա-  
դիրն ալ Դիւանիս վրայ է, եւ անոր իմաստը  
սապէս կամփոփի թէ իւր հրաժարականը վերջ-  
նական է, զի չուզեր գործօն պաշտօն ստանձ-  
նել առայժմ :

Նոյնպէս՝ Մամիկոնեան էֆէնտի ալ կրկ-  
նած է իր հրաժարականը՝ սն բառերով

« Կը փութամ ներկայիւս տոյն պարտաւո-  
րութիւնը կատարել և վերջնական կերպով  
ներկայացնել իմ հրաժարականս երրորդ Ատե-  
նապետութեան պաշտօնէն, յուէտ շնորհա-

կալ ըլլալով Պատկոտեղի Ժողովոյդ այն վստա-  
հութեան համար որով բարեհաճած էր պատ-  
ուել զիս : »

Աւասիկ այս է խնդրոյն վիճակը եւ այս-  
չափ են անոր վերաբերեալ գրութիւնները :

Արդ՝ խօսիլ ուզողներուն պատրաստ եմ  
խօսք տալու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Դիւանի անդա-  
մոց հրաժարման խնդիրը կրնանք լուծել այ-  
սօր, միայն ընտրութիւն չենք կրնար կատա-  
րել, եթէ 24 ձայնից միաբանութիւն չըլլայ :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քրիստոստուր է-  
ֆէնտի առաջարկը կերկրորդեմ, յաւելցնե-  
լով որ եթէ 30 ձայնից ալ միաբանութիւն  
գտնուի, ընտրութիւնն այսօր չկատարենք եւ  
յաջորդ նիստին վերապահենք. վասն զի մաս  
մը երեսփոխաններ կան, որոց մասին բացա-  
կայութեան խնդրոյն առթիւ պահ մը յետոյ  
տնօրէնութիւն պիտի ընենք, եւ չգիտենք թէ  
անոնցմէ որոնք պիտի մնան եւ որոնք հրա-  
ժարեալ պիտի համարուին. անոնց մէջ թե-  
րեւս այնպիսիներ գտնուին որ քուէ ստանան  
Դիւանի հրաժարեալ անդամոց ընտրութեան  
ժամանակ, եւ անմիջապէս հրաժարեալ հրա-  
տարակուին յերեսփոխանութենէ, բացակայու-  
թեանց խնդրոյն լուծման պահուն : Այս պատ-  
ճառաւ բանաւոր կը համարիմ ընտրութիւնը  
յաջորդ նիստին թողուլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ այդ նը-  
պատակաւ ըսի որ նախ հրաժարելոց խնդրովն  
զբաղինք. վասն զի՝ իրաւ է որ Ա. եւ Գ. Ա-  
տենապետ էֆէնտիներն ու Ա. Ատենադպիր  
էֆէնտին անդառնալի կերպիւ կը հրաժարին,  
սակայն կը յուսամ թէ Մէլիքեան եւ Զօպան-  
եան էֆէնտիները կը հաճին ազգասիրաբար  
չպնդել իրենց հրաժարականին վրայ : Ուստի  
այսօր այս կէտը գոնէ որոշենք լմնցնենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը չերկարելու  
համար պէտք է նախ հրաժարականները կար-

դաւ քուէի դնել, եւ ըստ այնմ ընտրութեան  
կէտը յետոյ որոշել :

Զայս ըսելով Ատենապետ էֆէնտին Ժո-  
ղովոյ որոշման կենթարկէ նախ՝ Սէրվիլէն է-  
ֆէնտիի հրաժարականն, եւ տեսնելով որ  
խօսք ուզող չկայ, քուէի կը դնէ Սէրվիլէն  
էֆէնտիի հրաժարականն Ա. Ատենապետու-  
թենէ :

Ժողովը 1 քուէի դէմ ԿԸՆԻՈՒՆԻ զայն :

Ատենապետ էֆէնտին նոյնպէս Ժողովոյ  
որոշման կենթարկէ եւ քուէի կը դնէ Մամի-  
կոնեան էֆէնտիի հրաժարականն Գ. Ատենա-  
պետութենէ, եւ Ժողովը 2 քուէի դէմ ԿԸՆ-  
ԻՈՒՆԻ զայն :

Հրաժարեալ Ատենապետաց շարքն սպա-  
ռելէ ետեւ, Ատենապետ էֆէնտին նոյնպէս  
Ժողովոյ որոշման կենթարկէ եւ քուէի կը դը-  
նէ Ա. Ատենադպիր Պէրպէրեան էֆէնտիի հը-  
րաժարականն, եւ Ժողովը 1 քուէի դէմ ԿԸՆ-  
ԻՈՒՆԻ զայն :

Ատենապետ էֆէնտի Ժողովոյ որոշման  
կենթարկէ նմանապէս Մ. Մէլիքեան էֆէնտիի  
հրաժարականն, որոյ մասին խօսք կուղէ Գա-  
փամաճեան էֆէնտին :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մէլիքեան Մը-  
կըրտի էֆէնտի քանի մը ասարիէ ի վեր կը  
չարունակէ Ատենադպրութեան պաշտօնը եւ  
դո՞ քրած է զԺողովն : Ուստի կառաջարկեմ  
մերժել նորա հրաժարականը, եւ Ա. Ատենա-  
դպրի պաշտօնը նմա յանձնել ինչպէս կանոնը  
կը տրամադրէ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Շնորհակալ եմ Գա-  
փամաճեան էֆէնտիի պատուասիրական խօս-  
քերէն. բայց չգիտեմ թէ անցելոյն մէջ  
արդեօք կրցած եմ գո՞ ընել զԺողովն. եւ ա-  
հա ասոր համար է որ կը վաբանիմ այս տար-  
ուան համար ալ ընդունելու զայն, մանաւանդ

որ քանի մը տարիէ ի վեր ինչպէս դիտէք,  
անընդմիջաբար վարելով, բաւական վստա-  
կած եմ :

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիք Գափամաճեան  
էֆէնտիի առաջարկը եւ ընդ նմին Մէլիքեան  
էֆէնտիի հրաժարեալ պատճառաբանութիւնը,  
եթէ ուրիշ խօսք ուզող չկայ, քուէի պիտի  
դնեմ Մէլիքեան Մկրտի էֆէնտիի հրաժարա-  
կանը :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Մէլիքեան էֆէնտիի  
յառաջ բերած պատճառաբանութիւնն ընդու-  
նելի չէ. վասն զի կրնայ ըլլալ որ ժամանա-  
կէ մը ետեւ Ժողովին որ եւ է մէկ նիստին  
ատենադպրութիւնը չհասնելուն համար երբ  
դիտողութիւն մը լինի, Մէլիքեան էֆէնտին  
ըսէ թէ՝ « Ես առաջուց յայտնեցի պաշտօնիս  
դժուարութիւնը, հետեւապէս ներողամտ  
պէտք է լինիք » :

ՄԵԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Երբ Ա. Ատենադպիր  
Պէրպէրեան էֆէնտիի հրաժարականն ընդուն-  
ուեցաւ, ըստ կանոնի Մէլիքեան Մկրտի է-  
ֆէնտին յաջորդեց անոր. ուստի այլ եւս իբ-  
րեւ Ա. Ատենադպիր պէտք է քուէի դնել Մե-  
լիքեան էֆէնտիի հրաժարականը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գարեգին էֆէնտիի  
դիտողութիւնն օրինաւոր կը լինէր Մ. Մէլիք-  
եան էֆէնտիի՝ հրաժարեալ Ա. Ատենադպրին  
յաջորդելուն նկատմամբ, եթէ Մէլիքեան է-  
ֆէնտի կանխաւ հրաժարական մատուցած  
չըլլար Բ. Ատենադպրութենէ : Իսկ արդ Դի-  
ւանս Մ. Մէլիքեան էֆէնտիի հրաժարականն  
իբր Բ. Ատենադպրութենէ կրնայ ներկայացը-  
նել ի քուէարկութիւն :

Գալով Շահպաղ էֆէնտիի դիտողութեան  
կը յայտնեմ թէ՝ ինչպէս միւսներուն հրաժա-  
րականի կրկնումն ու պատճառաբանութիւն-  
ները լսեցին երեսփոխանք եւ ըստ այնմ իրենց

որոշուած տուն, Մէլիքեան էֆէնտիի պատ-  
ճառարանութիւնն ալ, որ իր հրաժարականը  
կրկնելու համար ըրաւ, լսելէ ետեւ, ըստ  
այնմ իրենց կամքը յայտնելու ազատ են:

Եւ Ատենապետ էֆէնտիին քուէի դնելով  
Մէլիքեան Մկրտիչ էֆէնտիի Բ. Ատենադպ-  
րութենէ հրաժարականը, ժողովը միաձայն  
ԿԸ ՄԵՐԺԷ զայն եւ չընդունիր:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտիին կը  
յայտարարէ թէ Մէլիքեան Մկրտիչ էֆէնտիին  
ըստ կանոնի կանցնի Ա. Ատենադպրի պաշ-  
տօնին:

Այնուհետեւ ժողովոյ որոշման կենթար-  
կէ Գ. Ատենադպրի Զօպանեան Միհրան էֆէն-  
տիի հրաժարականն, որոյ մասին Գափամա-  
ճեան էֆէնտի խօսք կուզէ:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կրկնելով այն  
խօսքերս՝ զորս պահ մ'առաջ ըրի Մէ-  
լիքեան էֆէնտիի մասին, կառաջարկեմ նաեւ  
Զօպանեան էֆէնտիի հրաժարականը մերժել,  
եւ Բ. Ատենադպրի պաշտօնը նմա յանձնել:

Ատենապետ էֆէնտիին քուէի ենթարկե-  
լով Զօպանեան էֆէնտիի Գ. Ատենադպրու-  
թենէ հրաժարականը, ժողովը միաձայն ԿԸ  
ՄԵՐԺԷ զայն եւ չընդունիր:

Ուստի կը յայտարարէ Ատենապետ էֆէն-  
տիին թէ Զօպանեան Միհրան էֆէնտիի կանցնի  
ըստ կանոնի Բ. Ատենադպրի պաշտօնին:

Հրաժարմանց խնդիրն այսպէս վերջանա-  
լով, Ատենապետ էֆէնտի կը յայտարարէ թէ  
Մայր դիւանէն պակտող անդամներն են Ա.  
եւ Գ. Ատենապետներն եւ Գ. Ատենադպրին  
եւ ժողովին ուշադրութիւնն ասոնց ընտրու-  
թեան խնդրոյն վրայ դարձնելով կը հրաւիրէ  
խօսիլ ուղղորդելն խօսք առնուլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կառաջարկեմ որ  
կամ Մէլիքեան Գարեգին էֆէնտիին եւ կամ

Գափամաճեան Մինաս էֆէնտիին իբր կրտսե-  
րագոյն երեսփոխան ընդունին Գ. Ատենադպ-  
րի թափուր պաշտօնն եւ այս պակասը լեց-  
ուի լմննայ:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Կը ձայնակցիմ  
Փափաղեան էֆէնտիին:

ՄԷԼԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Կաղաչեմ որ իմ  
մասին ներողամիտ լինիք:

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Անկարելի է ինձ  
որ երեսփոխանութենէ զատ պաշտօն ընդու-  
նիմ:

ՄԿՐԵԱՆ Ս. ՅՈՎ. — Փափաղեան էֆէն-  
տիին հաւասարապէս կրտսերագոյն ցուցուց  
Մէլիքեան Գարեգին եւ Գափամաճեան Մի-  
նաս էֆէնտիներն, բայց ես կը կարծեմ թէ  
Գարեգին էֆէնտի աւելի կրտսերագոյն է:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Ս. ԷՖ. — Մինչեւ ցորդը ը-  
րածնիս օրինաւոր էր, զի ըստ կանոնի երբ  
Ա. Ատենադպրին հրաժարի, Բ. ը Ա. կը լլայ-  
նոյնպէս Բ. ին հրաժարման պահուն Գ. ը Բ.  
կը լլայ, երկու Ատենադպրաց ընտրութենէն  
ետեւ ցանկը փակուած ըլլալով, Գ. ին հա-  
մար նոր ընտրութիւն ընել հարկ է: Այս  
պատճառաւ Մէլիքեան եւ Գափամաճեան է-  
ֆէնտիներու մասին խնդիր բանալն աւելորդ  
կը համարիմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես քուէարկու-  
թեան մէկը պակաս ըլլալու համար առաջար-  
կեցի եւ նորէն կառաջարկեմ որ Գափամա-  
ճեան էֆէնտի իբր կրտսերագոյն ընդունուի  
Գ. Ատենադպրութեան պաշտօնին. կարծեմ  
թէ ուրիշ անգամ ալ այսպէս եղածը կայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քուէարկութեան  
ցանկը գոցուած է ըսուեցաւ, սխալ է. գոց-  
ուած չէ. զանազան պարագայներ մէջ մըտ-  
նելով Գիւանին անդամոց հրաժարման եւ ընտ-  
րութեան խնդիրն երկարեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներեցէք որ ժողովին  
ուշադրութեան յանձնեմ աս կէտը թէ պար-  
զապէս ժամափաճառութիւն ըրած կը լլայ ժո-  
ղովն այս խնդիրը շարունակելով, վասն զի  
օրինաւորութեան պարագայէն զատ ժամա-  
նակ փաստելու պարագան ալ կայ, նկատառ-  
ման արժանի. մինչդեռ Փափաղեան էֆէնտի  
քուէարկութեան մէկը պակաս ըլլալու համար  
փոփառեցաւ որ Գափամաճեան էֆէնտիին ըն-  
դունի Գ. ատենադպրութեան պաշտօնը, ան-  
զիէն տարիքի խնդիր մ'ալ երեւան ելաւ,  
Գիւանը կը կարծէ թէ մէկ քուէարկութիւն մը  
պակսեցնելու համար այսպէս ժամանակ զո-  
հելն աւելորդ է: Քանի որ ժողովն երկու  
Ատենապետաց ընտրութիւն պիտի կատարէ,  
Գ. ատենադպրի ընտրութեան խնդիրն ալ այն  
պահուն կրնայ թողուլ:

ԱՐԱՊԵԱՆ Ա. ԷՖ. — Փափաղեան էֆէնտի  
ըսաւ թէ ատենադպրութեան համար սովոր-  
ութիւն կայ առանց քուէարկութեան ընտ-  
րութիւն ընել, եւ առաջարկեց որ այնպէս  
ընենք ու դործը կարճենք: Եթէ յիշուի այն-  
պիսի սովորութիւն մը կայ որ օրէնքի կարգ-  
անցած է, պէտք է ըստ այնմ վարուինք. իսկ  
եթէ չկայ, օրէնքն ինչ որ է զայն պէտք է  
գործադրեմք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւանը դարձեալ զի-  
տել կուտայ թէ օրինաւոր չըլլար առանց քու-  
էարկութեան Ատենադպրի ընտրութիւն կա-  
տարել, եւ թէ այս խնդիրն ընտրութեանց  
պահուն կարգն եկած ատեն՝ պէտք է նկա-  
տողութեան առնուլ:

Ուրեմն Մայր Գիւանէն պակասեալ ան-  
դամոց ընտրութեան խնդրոյն դառնալով,  
պէտք է յիշեցնեմ ժողովին որ ըստ կանոնի  
կամ իսկական մեծամասնութիւն պէտք է եւ  
կամ 2/4 ձայնից միաբանութիւն: Արդ ըստ ո-  
րում իսկական մեծամասնութիւն չունինք,  
2/4 ձայնից միաբանութիւնը պիտի փորձենք,  
եթէ ժողովն այսօր ուզէ կատարել ընտրու-  
թիւնները:

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ զիտողութեա-  
նըս կարեւորութիւնն չտա՞ր արդեօք ժողովը:  
Պահ մ'առաջ յիշեցուցի թէ բացակայից վե-  
րաբերեալ խնդիր մ'ունինք կարգադրելի. եւ  
այս պատճառաւ առաջարկեցի Գիւանի ան-  
դամոց ընտրութիւնն առաջիկայ նիստին թո-  
ղուլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անշուշտ ձեր առաջար-  
կութենէն պիտի սկսինք խնդիրը:

Եւ Ատենապետ էֆէնտիին քուէի դնելով  
Ենուստեան էֆէնտիի առաջարկը՝ Գիւանին  
ընտրութիւնն առաջիկայ նիստին ձգելու մա-  
սին, ժողովը՝ 11 քուէի ընդդէմ 13 քուէով  
կը մերժէ զայն եւ ԿՈՐՈՇԷ այսօր ընտրութեան  
ձեռնարկելով որոշող ձայնից միաբանութիւնը  
փորձել:

Հետեւապէս երեսփոխանը կը հրաւիր-  
ուին Ա. Ատենապետի ընտրութեան համար  
միանուն քուէթուղթ պատրաստել:

Քուէարկութեան համար 10 վայրկեան  
դադար տրուելէ ետեւ, վերստին ատենը  
կը բացուի եւ քուէհամարի քննիչ կընտրուին,  
Ս. Կարապետ քահանայ Սեթեան  
Ասապա էֆէնտի Իկիտպաշեան  
Կարապետ » Իւթիւճեան  
Աքրահամ » Այվաղեան:  
Քուէհամարը կատարուելով յետագայ ար-  
դիւնքը կը գոյանայ:

Թիւ քուէարկուաց	33
Սիմոն պէյ Մագսուտեան քուէ	48
Յ. Մէրեթ-Գուլի էֆէնտի	44
Մնացեալք մէյմէկ քուէ կ'ստանան:	

Ատենապետ էֆէնտիին ժողովին հաղոր-  
դելով քուէհամարին արդիւնքը կը յայտարա-  
րէ թէ 2/4 ձայնից միաբանութիւնը գոյացած  
չըլլալով Ա. Ատենապետի ընտրութիւնը չէ  
յաջողած:

Եւ յարելով թէ ընտրութեան կարգը Գ.  
ատենապետի պաշտօնինն է, կը հարցնէ ժո-

դողին, միթէ կուզէ՞ ասոր համար ալ 24 ձայնից միաբանութիւնն փորձել, թէ ընտրութիւններն յառաջիկայ նիստին թողուլ:

Տ. ՄԱՏԹԵՆՍ ԵՊԻՍ. — Քանի որ բաւական ատեն Ա. ատենապետի համար համաձայնութիւն գոյացնելու փորձ ըրինք ու չը յաջողեցաւ, ինձ կը թուի թէ աւելորդ է Գ. ատենապետի համար կրկին այսօր փորձել, եւ լաւագոյն է առաջիկայ նստին ձգել:

ՎԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կաղաչեմ ուշադրութիւն ըրէք. չորս ամիսէ ի վեր ժողովը բացուած է, Գիւանի ընտրութեան խնդիրը կերթայ կուգայ եւ տակաւին վերջացած չէ. կը փափաքէի որ գոնէ Ա. ատենապետի ընտրութիւնն այսօր կատարուէր, եւ միայն Գ. ատենապետի եւ Գ. ատենադպրի ընտրութիւնը մնար: Եթէ Ա. ատենապետի ընտրութեան համար չմիաբանեցանք, թերեւս միւսներուն համար միաբանինք, արդեօք կարելի չէ՞ միւսներուն համար ալ փորձ մ'ընել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի անգամ որ երեսփոխանք փափաք յայտնեն միաբանելու համար խորհրդակցելու, Գիւանը պատրաստ է միջոց տալ նոցա. բայց պէտք է նախ որ ժողովը իւր կամքն յայտնէ որոշող ձայնից միաբանութիւնը փորձելու մասին, ինչպէս որ Ա. ատենապետի ընտրութեան համար փորձելու ուղեք. եւ եթէ անոր մէջ չը յաջողեցաւ, շատ կարելի է որ Գ. ատենապետի ընտրութեան մէջ յաջողի: Ուստի այս մասին խօսիլ ուղղորդները կրնան խօսք առնուլ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քանի քանի անգամ ըսի եւ վերջին անգամ զրով եւս առաջարկեցի որ խել մը երեսփոխաններ կան հրաժարեալ, անոնց հրաժարականն ընդունուի եւ տեղերնին նորերն ընտրուին, եւ այս առաջարկութիւնս տակաւին արդիւնք մը չունեցաւ. քանի որ հրաժարեալ երեսփոխանաց ընտրութիւններն ետ մնան, այս անյաջողութիւնները պիտի շարունակեն: Երեսփոխան-

ներ ալ կան որ ներկայութեան տուժարն ըստօրագրելէ ետեւ կը ձգեն կերթան. ինչպէս Տ. Գրիգոր եւ Տ. Կարապետ քահանայներն ստորագրեցին ու գացին: Ժամը 6 ին ատենանը պիտի բացուի ըսելով ժողովը կը հրաւիրենք եւ ժամը 8 ին հազիւ կուգանք, ժողովոյ բացումէն ի վեր այսքան ամիս անցաւ եւ դեռ դիւան մը չկրցինք կազմել. այս վիճակն անտանելի է ըստ իս. այս մասին ինչ ընել որ պէտք է, անոր վրայ խորհինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դուք ալ ուրեմն Գիւանի անգամոց ընտրութիւնն յետաձգելու կարծիք ունիք, եւ ըստ Եռուսեփեան էֆէնտի առաջարկութեան՝ Օրակարգի երկրորդ խնդիրը ձեռք առնուլ կուզէք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Յետաձգենք ալ, նախաձեռնք ալ, չպիտի կրնանք յաջողիլ եթէ այսպէս շարունակուի: Եթէ 440 երեսփոխաններէն 47 ը հոս չգայ, ժողովը մեռած է ըսել է. ես քանի քանի երեսփոխաններ տեսայ, հարցուցի թէ ինչու չէք գար. կըսեն թէ դորձ ունինք:

ՅՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ամենէն բանաւորն է կարծեմ, Գիւանի հրաժարեալ անգամոց ընտրութիւնն յետաձգել, ինչպէս որ Մատթէոս Եպիսկոպոս նկատել տուաւ, եւ ինչպէս որ Քրիստոսաւոր էֆէնտի ալ համակերպեցաւ: Այս ընտրական խնդրոյն վերջնական լուծում մը կրնանք տալ յաջորդ նիստին: Իսկ այսօր քան մը կայ, այն կրնանք ընել, Երեսփոխաններ կան որք կարծելով թէ հրաժարեալ համարուած են, չեն գար ժողովին. թէ եւ այս խնդիրը քանի մ'անգամ խորհրդածութեան ենթարկուեցաւ, բայց տակաւին որոշման մը չէ յանդած. այսօր կըրնանք որոշել թէ այս վիճակին մէջ ինչ ընել պէտք է:

ՎԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ կարծեմ թէ ընդունայն է վիճարանիլ. 24 ձայնից միաբանութիւնն անգամ մը փորձեցինք, չ'յաջո-

ղեցաւ, ուստի կրկինն աւելորդ է: Լու է Գիւանի անգամոց ընտրութիւնը յետաձգել յաջորդ նիստին, զոր ըստ կանոնի 8 օրէն պէտք է գումարել, զի անբաւական նիստէ մ'ետեւ 8 օրէն նիստ ըլլալ կը արամադրէ մեր ներքին կանոնը: Իսկ այսօր բացակայ երեսփոխանաց խնդիրը ձեռք առնուլ եւ լուծել ամենահարկաւոր է, խնդիր մը՝ որ ժողովոյս գոյութեան նկատմամբ մեծ կարեւորութիւն ունի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ կարծիքները կը միանան եւ Գիւանի հրաժարեալ անգամոց ընտրութիւնը յաջորդ նիստին յետաձգելու առաջարկութեան յարելով, այժմ Օրակարգին Բ. խնդիրը ձեռք առնելու կը յանդին: Ուրեմն զայս քուէի պիտի դնեմ:

Ատենապետ էֆէնտին սոյն բանաձեւով խնդիրը քուէի կենթարկէ եւ ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, զայն, կանցնի Օրակարգի Բ. խնդրոյն:

Բ.

ԽՈՂԻՐ ՎԵՊԱՓՈՒՍՈՒՔԵԱՆ ԵՎ ԲԱԳԱԿԱՅՈՒՔԵԱՆ ԷՐԵՍՓՈՒՍԱՆԱԿ. — Տեղեկագիր Յանձնախմբին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիտէք արդէն թէ ժողովը իւր նախնիաց շրջանին վերջերը Յանձնախումբ մը կազմեց քննելու եւ տեղեկագրելու համար թէ ինչ միջոցներով հնար է զիւրացնել երեսփոխանաց՝ ժողովոյ նիստերուն ներկայութիւնն, թէ առ այս ժողովոյ գումարմանց տեղոյն եւ ժամանակին նկատմամբ ինչ բարեփոխութիւններ ընել հարկ եւ հնար է, եւ թէ կարելի եղած դիւրութիւններն ընծայելէ ետեւ ինչ անօրէնութիւն պէտք է ընել այն երեսփոխանաց համար՝ որ շարունակեն զանցառու գտնուիլ իրենց պաշտօնին կատարման:

Սոյն Յանձնախումբն իր պաշտօնը կատար-

ելով տեղեկագիրը մատուցած է արդէն, որ ժողովոյս ներկայ բացման Ա. նիստի ատենագրութեան մէջ արձանագրուած ըլլալով (տես երես 13) անշուշտ սերտած էք զայն: Միթէ կուզէք անոր ամբողջին ընթերցումը լսել այժմ: (Վայրկեան մը լուռութեմ ետեւ) Եթէ հարկ չէք տեսներ, եղբակացութիւնը միայն կը կարդամ, որ ասոնք են:

1. Ժողովատեղին փոխադրել ի Ղալաթիա, որոյ մասին կանխաւ ստացուած է Ս. Պատրիարք Հօր հաւանութիւնն:

2. Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ձախակողմեան տաճարը կանոնաւոր ժողովատեղւոյ ձեւին մէջ դնել:

3. Գումարումներն շարունակել 13 օրն միանգամ ուրբաթ օրերն ընել:

4. Չորս անգամ շարունակ՝ առանց հիւանդութեան եւ ճամբորդութեան օրինաւոր պատճառաց եւ առանց անդիմադրելի արդիւման, որոյ էութիւնն ընդունուի յատենի ժողովոյ, բացակայ եղող երեսփոխանն հրաժարեցնել իւր պաշտօնէն իբրեւ զանցառու:

5. Յարգ բացակայից՝ յետ ընդունելութեան սոյն առաջարկութեանց դէթ ստաջնոյն, աղգարարութիւն ուղղել եւ ծանուցանել եղած նոր տնօրէնութիւնքն: Յառաջ քան զայնս տեղի ունեցած բացակայութիւնքն չեղեալ համարելով:

(Յետ ընթերցման շարունակելով)

Աւասիկ այս 5 կէտերուն մէջ կամիտուին Յանձնախումբին առաջարկութիւնները:

Առաջին կէտն որ է ժողովատեղին Ղալաթիա փոխադրել, արդէն գործադրութեան մէջ ըլլալով, թէ եւ կատարուած իրողութիւն մը կը համարուի, սակայն ըստ որում առժամանակեայ կերպիւ տնօրինուած, պէտք է քուէէ անցնել եւ վաւերականութեան գրոշմը տալ անոր: Ուստի նախ զայն քուէի պիտի ենթարկեմ:

Եւ Ատենապետ էֆէնտին քուէի դնելով տեղեկագրին եղբակացութեան առաջին կէտն,

որ է՝ «Ժողովատեղին փոխադրել ի Ղալաթիա որոյ մասին կանխաւ ստացուած է Ս. Պատրիարք Հօր հաւանութիւնն» : Ժողովը միաձայնութեամբ ընդունեց եւ վաւերաց զայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարգը կուգայ երկրորդ կէտին, որ է :

«Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ձախակողմեան տաճարն կանոնաւոր ժողովատեղւոյ ձեւին վերածել» :

Այս մասին խօսիլ ուղղուեցրը կը հրաւիրեմ խօսք առնուլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Արդէն անդիլ տաճարն անդամ անբաւական է ժողովատեղի ըլլալու, ուր կը մնայ այս, որ աւելի փոքր է անցեալներն՝ ինչպէս կը յիշէք, հիւր մ'ալ ունեցանք հոս, եւ պատիւ չբերելու վիճակին մէջ մնացինք : Իբր եկեղեցի նկատելով ուրիշ է, իսկ իբր խորհրդարան՝ անբաւական է :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. — Միանգամայն անպատշաճ է :

ԶԱՅՆԵՐ. — Ի՞նչ ընենք ուրեմն :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կառավարկեմ վերապահել այս կէտը :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. — Անշուշտ կը յիշէք որ ասկէց առաջ ժողովոյս կողմանէ Յանձնախումբ մը կազմուած էր ժողովարանի մը շինութեան գործին վրայ խորհելու համար : Բայց տեղեկագիր մը չեկաւ ցարդ եւ չը գիտեմք թէ այդ Յանձնախումբին պաշտօնն ինչ ելք ունեցաւ : Ուստի Երեսուֆեան էֆէնտի առաջարկը կրկնելով կըսեմ՝ յետաձգենք այս կէտը մինչեւ գարմանը գտնուի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մտաթէոս կայսերական յիշեցուցած Յանձնախումբին անդամներէն մէկն ալ ես էի : միամտեայ պայմանաժամաւ պաշտօն յանձնուեցաւ մեզ այն ատեն եւ մեք Սրբազան Պատրիարք Հօր առաջին հր-

բաւերին գացինք, անմիջապէս 2000 ոսկւոյ ծախուց պէտքն երեւան ելաւ : հարկ կըլլար 2000 ոսկւոյ վարկ մ'առաջարկել, սակայն Յանձնախումբին մէջ մ'ալ չկրցաւ գումարուիլ եւ իր տեղեկագիրը պատրաստել : Կարծեմ թէ այս նիւթին վրայ հոս քանիցս հարցում ալ եղած եւ մեր պատճառը բացատրած եմք : Քանի որ դրամական անձկութիւնը զօրաւոր արդելք մը կը յարուցանէ մեր դէմ, դարձեալ հարկ է յետաձգել այս կէտը : Իսկ տեղեկագիրն եզրակացութեան մէջ տեսնուած եկեղեցւոյն ձախակողմի կամ աջակողմի մասին խնդիր յուզելն աւելորդ կը համարիմ ես : Հակառակ Քրիստոստուր էֆէնտի դիտողութեան այս ձախակողմեան տեղն աւելի յարմարագոյն կը դատիմ, եւ կրնանք առայժմ շարունակել աստ մեր նիստերը, միայն քանի մը պէտքեր կան հոգալիք, այն ալ մեր Ելմտական յանձնախումբին կը պատկանի, որ եթէ կազմուած է, անոր պէտք է յանձնարարել զարժանն հոգալ եւ անօրինել :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Իբր անդամ Յանձնախումբին կրնամ յայտարարել թէ յարմար ժողովատեղի մը սահմանելու կէտին վրայ Յանձնախումբը շատ երկար խորհեցաւ, սակայն զարման մը չկրցաւ գտնել, եւ այսպէս խընդիրն հոս բերել հարկ դատեց : Իսկ թէ որ ժողովն ուրիշ յարմար տեղ մը որոշէ, անոր ըսելիք մը չունի Յանձնախումբը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնեմ որ ժողովը զանազան պատճառներով ժողովատեղի մը սահմանելու հարկն անմիջական չդատեր եւ կ'ուզէ առ այժմ շարունակել իր նիստերն անդ ուր որ կը գտնուինք այժմ : Միայն թէ փափակեան էֆէնտի յիշած Ելմտական յանձնախումբն՝ որոյ պէտքը յայտնեց, տակաւին կազմուած չէ : Մայր դիւանին ամբողջադուժն ետեւ պէտք է կազմենք այդ յանձնախումբը եւ տեղը Ղալաթիա ըլլալու պայմանաւ անոր յանձնենք ժողովատեղւոյ խնդիրը : Կարծեմ այս ձեւով կրնանք վերջացնել եզրակացութեան երկրորդ կէտն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Անանկ չէ, ժողովը միանգամ ընդ միշտ պշտած է ներքին կանոնադրութեամբ հոս Ղալաթիոյ եկեղեցւոյ մէջ ընել իւր նիստերն : Միայն աջակողմի ձախակողմի խօսքը վերցնել պէտք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եկեղեցւոյ մէջ նիստ ընելու տրամադրութիւն չկայ Կանոնագրին մէջ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քսան տարիէ ի վեր եկեղեցւոյ մէջ նիստ ըրած ենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ըսէք թէ աւելորդ կը դատիք տեղեկագրի եզրակացութեան երկրորդ կէտն, եւ կուզէք մերժել զայն : Եթէ այս է ձեր առաջարկութիւնը, զայն քուէի պիտի դնեմ :

Եւ Ատենապետ էֆէնտին քուէի դնելով տեղեկագրի եզրակացութեան երկրորդ կէտը, ժողովը կ'ըմբօթէ զայն իբր աւելորդ :

Ատենապետ էֆէնտին երրորդ կէտին վրայ խօսիլ ուղղուեցրը կը հրաւիրէ խօսք առնուլ :

ՄԷԼԻՔԵԱՆ Ք. ԷՖ. — Կանոնագրութիւնը նախատեսած է զայդ, նոր օրէնք դնելու հարկ չկայ :

ԶԵՐԱԶ Ք. ԷՖ. — Նախ կուզեմ գիտնալ թէ յանուն Յանձնախումբին ո՞վ պիտի խօսի եւ պաշտպանէ տեղեկագիրը, նորա անդամներէն Պէրպէրեան էֆէնտի՝ որ տեղեկագրեր կարգուած էր, այսօր բացակայ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ կէտը մեր ուշադրութենէն վրիպած չէ, բայց երբ Տեղեկագիր մը կայ օրակարգին մէջ, նորա տեղեկագրերին պարտքն է ներկայ գտնուիլ ժողովին, եթէ կուզէ պաշտպանել իւր տեղեկագիրն : Մայր Դիւանը չկրնար գիտնալ թէ ո՞վ

պիտի պաշտպանէ այժմ տեղեկագիրը, բայց իւր պարտքն է դիտել տալ որ Երեսուֆեանք իրենց կարծիքն յայտնելու համար տեղեկագրեր վնասուելու պարտաւոր չեն : Եթէ տեղեկագրերը բացակայ է, կան Յանձնախումբին անդամներէն որ ներկայ են եւ կրնան պաշտպանել իրենց տեղեկագիրն, երբոր հարկն զգան :

ԶԵՐԱԶ Ք. ԷՖ. — Վիճարանութեան զըրուած այս երրորդ յօդուածն իմ առաջարկութեանս հետ վերաբերութիւն ունենալով, կուզեմ խօսիլ սոյն կէտին վրայ :

Եւ նախ շնորհակալութեան պարտք մ'ունիմ, զոր կը փափաքիմ կատարել : Անցեալ շրջանի վերջին նիստերէն միոյն մէջ երբ բացակայութեանց խնդրոյն վիճարանութեան շարունակութիւնը տեղի կունենար, ես բացակայ էի, ինչպէս շատ անգամ կը պատահի զժրագղաբար, բայց այն նիստին Ատենադրութիւնը կարգաւոր տեսայ որ Յանձնախումբին արդի տեղեկագրեր Պէրպէրեան էֆէնտի բարեկամս իմ առաջարկութիւնս աշխուժեւ եւ եւս անողեամբ պաշտպաներ է : Ուստի եւ պարտք կը համարիմ շնորհակալութիւնս յայտնել : Թէ եւ ինք այսօր բացակայ է, բայց հոգ չէ, Ատենադրութեան մէջ կը կարգայ հարկաւ :

Այս պարտքը կատարելէ զինի կանցնիմ բուն խնդրոյն : Ինչպէս որ տեղեկագրին մէջ կարդացած էք, մեր առաջարկութիւնը շնորհ չէ դտեր Յանձնախումբին առջեւ, որ թէեւ պատճառներ ալ ցուցեր է, բայց ըստ իս առնոք բաւական դորաւոր եւ համողիչ չեն իմ առաջարկութիւնս մերժելու : Ես այնպէս կը կարծեմ թէ Յանձնախումբը շատ նեղ շրջանակի մէջ ըրած է այդ մասին իր քննութիւնը, ուր պարունակուած կը տեսնուին զժրագղաբար խնդրոյն փոքր մասերը, մինչդեռ կարեւոր մասը, խնդրոյն բուն ոգին դուրս կը մընայ : Նախ եւ առաջ տեսնենք թէ դիւստորաբար ի՞նչ կայ այդ սահմանին մէջ :

Ա. Տեղւոյն փոխադրութեան մասը կարգադրուած է, եւ շնորհակալ ենք Ս. Պատրիարք Հօր՝ որ հաճեր է ընդունիլ Յանձնախումբին առաջարկութիւնը : Բ. Հաստատուել ժողովատեղի մը ունենալու մասը ժողովը յի-

տաճակաց աչք մասին խօսք չունիմ: Երբորդ սա խնդիրը կայ թէ բացակայութիւնները երբորդ անգամին թէ չորրորդին պէտք էր պատժել, ինչպէս կառավարիչը Մայր Դիւանը: Յանձնախումբը այս մասին ալ իւր կարծիքը տուած է Մայր Դիւանի առաջարկութիւնը ընդունելով փոքր բարեփոխութեամբ, ասի արդարեւ դիւրութիւն մը աւելի ընծայել է բացակայ երեսփոխանաց, եւ ես իբր դիւրութիւն առաջարկող պիտի պարտաւորիմ ընդունել այս որոշումը, թէեւ կը փափաքէի որ աւելի արդիւնաւոր եղանակ դտած ըլլար Յանձնախումբը:

Այդ որոշումը գուցէ քիչ մը աւելի դիւրութիւն տայ այն դասին համար որ ոչ վաճառական, ոչ սեղանաւոր ըլլալով եւ ոչ իսկ թղթատարութեան հետ գործ մ'ունենալով, դարձեալ կանոնաւոր կերպով ժողովոյս նիստերուն ներկայ չի գտնուիր: Բայց այն դասը որուն համար դիւրութիւն կ'առաջարկէի ասկէ առաջ, այն դասին համար ի՞նչ եղած է: — Ոչինչ:

Տեղեկագիրը կ'ըսէ «Ուրբաթ օրն ալ իբրեւ թղթատարի օր՝ վաճառականութեամբ եւ սեղանաւորութեամբ զբաղող երեսփոխանաց համար գրեթէ անկարելի կ'ընէր ճշդապահութիւնը»: Արդ, Յանձնախումբը ասոնց դիւրութեանը համար երեք անգամը չորս անգամի վերածեր է: Բայց ասկէ ի՞նչ կ'ենէ. յայտնի բան է որ թղթատարի հետ գործ ունենալը պարտական աշխատութիւն մ'է, եթէ վաճառական մը զոր օրինակ երեք ուրբաթ շարունակ թղթատարութեան հետ գործ ունի, չորրորդին ալ ունի, հինգերորդին ալ Յանձնախումբը ներկայացուցած եղանակը ի՞նչ օգուտ կը բերէ իրեն: — Ոչինչ:

Արդ հարկ է իրական դիւրութիւններ տուլ այն կարգի անձանց որք իրօք կարեւոր դաս մը կը կազմեն ժողովոյս մէջ:

Ահա Յանձնախումբն այս անձուկ սահմանին մէջ քննած է խնդիրը, բայց ես ասկէ առաջ տարբեր վիճակի մէջ կըմտնէի խնդիրը: Եւ չեմ սխալիր եթէ ըսեմ թէ ժողովը ալ նոյն տրամադրութեան մէջ էր: Արդէն զիս եւ Պէրպէրեան էֆէնտին՝ որ նոյնպէս իմ ա-

ռաջարկութիւնս կը պաշտպանէր, Յանձնախումբը անգամ ընտրելու պատիւն ընելով, ժողովը անշուշտ իմ առաջարկութեան համակիր ըլլալը կը յայտնէր եւ կը փափաքէր որ խնդրոյն այս մասը դըլիսաւորաբար քննուէր, ապա թէ ոչ չէր արժեր որ միւս գրեթէ անշուշտ մասերուն համար յատուկ Յանձնախումբ մը ընտրեր:

Առաջարկութիւնս երկու մաս ունէր. մէկը ուղղակի բացակայութեան խնդրոյն կը վերաբերէր: Այլ փափաքէի դիւրութիւն մը ձեռք բերել երեսփոխանաց համար որպէս զի կարենան դալ մեզ նիստերուն, մանաւանդ այն դասին համար որ ինչպէս կ'ըսէ տեղեկագիրը, ուրբաթ օրերը թղթատարութեան հետ գործ ունենալով չէ կարող փոքր ինչ ճշդութեամբ ժողովոյս նիստերուն ներկայ գտնուիլ: Ասոր համար կառավարիչի որ միւսը անգամ մը կիրակի օր մ'ալ նիստ ունենանք, ըստ իս իրական դիւրութիւն մը հայթայթող եղանակն այս է միայն: Այս համոզման վրայ այսօր աւելի կը պնդեմ, վասն զի կը տեսնեմ որ Յանձնախումբը ուրիշ արդիւնաւոր դարման մը չէ գտեր, ընդհակառակն մերժեր է իմ առաջարկութիւնը ըսելով թէ շնորհ չը գտաւ, վասն զի բազում անյարմարութիւններ ունի, եկեղեցականք եկեղեցական պաշտամամբ զբաղեալ, եւ աշխարհական երեսփոխանք թաղային գործերով պարսպած ըլլալով: Եթէ բազում անյարմարութեանց մէջ զըլիսաւորներն ասոնք են, բան մը չ'են ուրեմն, վասն զի երեսփոխանական ժողովոյ գումարման ժամուն եկեղեցական պաշտամունք չե՛ կատարուիր, ուրիշ բան է եթէ կիրակի առաւօտները ժողով գումարել առաջարկած ըլլայի, այս պարագային մէջ գէտէի թէ ասի ոչ թէ միայն Եկեղեցական երեսփոխանաց համար անկարելութիւն մ'է, այլ նաեւ աշխարհականաց համար ալ, վասն զի եթէ եկեղեցականք պատարագ կը մատուցանեն եւ անոր համար չ'են կրնար նստիլ դալ, աշխարհական երեսփոխանք ալ ընդհանրապէս Պատարագի ներկայ գտնուելուն համար չը պիտի կրնային գալ: Յանձնախումբը այս ա-

ռարկութեանը վրայ դարմանքս աւելի կը մեծնայ երբ կը յիշեմ որ դեռ անցեալ օր, Եռսուֆեան էֆէնտին հինգշաբթի եւ ուրբաթ առաւօտները, որ է ըսել Եկեղեցական արարողութեան միջոցին նիստ գումարելու առաջարկութիւն ըրած ատեն, Յանձնախումբն անդամներէն Գափամաճեան էֆէնտին էր որ անմիջապէս ջատագով կանգնեցաւ սոյն առաջարկութեան:

Ինչ որ ըսինք երեսփոխանաց մասին, նոյնը կրնանք ըսել նաեւ Թաղական Խորհրդական երեսփոխանաց համար ալ, որոնք ընդհանրապէս կիրակի օրերը կէս օրէն անդին գործ չ'ունին: Հետեւաբար Յանձնախումբը այս առարկութիւնները համոզիչ չ'են ժողովոյս համար:

Առաջարկութեան երկրորդ մասը ժողովոյս նիստերուն անբաւականութեան խնդիրն էր: Այլ տեսնէի որ Երեսփոխանական ժողովէն դուրս ելած ատեննիս, ամէնքս ալ այն համոզումը կ'ունենայինք թէ մեծ բան մը չ'ենք ըրած, թէ միջոց չ'ենք ունեցած մեծ գործ մը տեսնելու, կը տեսնէի որ կենսական խնդիրներ օրէ օր կը դիւրուին խնդրոց կարգին մէջ, միայն 57 հատ կարեւոր խնդիրներ կան ի պատրաստի որք անլոյծ կը մնան, եւ չեմ կարծեր որ այսչափ երկար տարիներէ ի վեր չ'իլուծուած խնդիրները տասն եւ հինգ օրը անգամ մը երկու ժամ նիստ ընելով կարելի ըլլայ լուծել:

Այս նկատումներն ունենալով է որ ժողովոյդ առաջարկ մը ներկայացուցած էի, որուն վրայ աւելի կը պնդեմ այս անգամ, վասն զի լաւ համոզուած եմ որ բացակայութեանց խնդրոյն գոհացուցիչ լուծում մը տալու զըլիսաւոր միջոցը կենսական խնդիրներով զբաղելու ազատ ժամանակ ունենալն է մեր տրամադրութեան տակ, եւ իմ առաջարկութիւնս այս մասին դարման մը կրնայ ըլլալ:

Ուրբաթ օրերը, էֆէնտիններ, ամեն օր գործը ձգելով հոս կուգայ, ոմանք հոս գըտնուած միջոցին իրենց գործին վրայ կը մտածեն, եւ շատեր կը մեկնին շուտ մը իրենց գործը շարունակելու համար: Այրակի օրերն

այնպէս չէ, ամեն մարդ գործէ ազատ, ատուն ելած ատենը կը մտածէ նախ թէ օրն ինչպէս անցնէ որպէս զի հաճոյք մը իմանայ իր հանգստութեան օրէն. եւ երբ այդ անձը ազգային երեսփոխան է, անշուշտ պիտի մըտածէ թէ անցուցած օրէն գո՞հ լինելու միակ միջոցն է ազգին համար աշխատիլ նոյն օրը, ճաշէն վերջը քանի մը ժամ: Եւ պէտք է դիտել թէ այդ գոհողութիւնը ամիսն անգամ մը պիտի ընէ միայն:

Այս զոհողութիւնները մեծ բան մը չէ, մեր պատասխանատուութիւնը քիչ մը կը թեթեւցնէ, ժողովս որ այնչափ կը վախնայ պատասխանատուութենէ պէտք է այս փոքր զոհողութիւնը ընէ: Լաւ կը յիշեմ որ դեռ անցեալները մեր պատուական ընկերներէն մէկը տեսնելով որ Նախաքննիչ դիւանաց կազմութեան ցուցակները չ'են պատրաստուած Մայր դիւանին կողմանէ, անմիջապէս հիմայ պատրաստուել է կը գոչէր: Սրբազան Պատրիարքը Հայր իւր պատգամագրով պատասխանատուութիւն կը ձգէ Ընդհանուր ժողովոյս վրայ: Ճշմարտութիւնն այն է որ շատ անգամ զոհողութիւններ ընել յանձն կառնունք, բայց իրօք բան մը չ'ենք ընել, որովհետեւ պատասխանատուութիւն կը հրաւիրենք մեր վրայ: Այլ յիշէք անշուշտ որ Սրբազան Պատրիարքը երբ վերջին անգամ իւր հրաժարականը ետ առաւ, սա պայմանաւ առաւ որ մեք եւս մեր կողմանէ զոհողութիւն ընելով իւր բեռը թեթեւցընենք, եւ մենք հանդիսաւոր կերպով նոյն զոհողութիւնն ընել խօստացանք: Բայց ներեցէք ինձ ըսելու որ այն օրէն ի վեր բացակայութիւնները համեմատաբար աւելցան, ինչպէս որ անցեալ շրջանի վերջին ատենադրութեան մէջ հրատարակուած վիճակագրական ցուցակէն յայտնի կերեւայ:

Այս զոհողութիւնները ընելու միակ միջոցն է իմ առաջարկութիւնս ընդունիլ: Անունու ալ քուէն կը խնդրեմ եւ կը յուսամ թէ չէք զլանար, մասնաւորապէս անոնք որ ասմեն ժամանակ կը տրտնջան թէ ժողովս բան մը չ'ընել, պատասխանատուութեան տակ կը մնան, եւ այլն, անոնց քուէն ոչ թէ կը խընդրեմ, այլ կը պահանջեմ:

ԳՈՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք ուղարկել էի Գ. Չերազ էֆէնտի պատասխանելու համար, սակայն օրը տարածամած ըլլալուն կը հարցը նեմ, միջէ կուզէ՞ ժողովը լսել զիս. եթէ չուզէր լսել, կը վերապահեմ խօսքս յաջորդ նիստին. բայց այժմէն դիտել կուտամ որ Չերազ էֆէնտի ինքն իրեն դէմ կը խօսի, վասն զի ինք անգամ ըլլալով Յանձնախմբին ներկայ չը գտնուեցաւ անոր ամեն նիստերուն . . :

ՉԵՐԱԶ Գ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ես երկու անգամ հրաւէր ընդունեցայ եւ մէկ անգամուն ներկայ գտնուեցայ, իսկ երկրորդին ստիպողական գործով մ'արգիլուեցայ :

ԳՈՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Յանձնախումբը նոյն իսկ երեսփոխաններէն շատերուն հետ տեսնուելով ճանչցաւ քիչ շատ անոնց զաղափարներն, որոց ամենն ալ կը համակերպէին ուրբաթ օրերը միայն նիստի օր ըլլալուն. ուստի Յանձնախումբն ալ ուրիշ բան չէր կրնար առաջարկել : Ես կը յիշեմ որ Չերազ էֆէնտի առաջարկութիւնն ասկէց առաջ ալ անգամ մը եկաւ ժողովին, բայց չընդունուեցաւ :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենապետ էֆէնտին աղէկ ըրաւ որ տեղեկագրին եզրակացութեանց վրայ բացաւ վիճարանութիւնն. եթէ տեղեկագրին վրայ սկսուէր վիճարանութիւն, շատ ըսելիքներ կային, վասն զի Յանձնախումբն իր պարտաւորութենէն շեղած եւ իրեն եզած յանձնարարութենէն դուրս կէտերու մէջ մտած է : այսչափ կըսեմ ու կանցնիմ :

Բուն խնդրոյն զանալով քանի որ մինչեւ հիմա ուրբաթ օրն Ազգային ժողովոյ նիստի օր սահմանուած եւ սովորութիւն եղած է ուրբաթ օրերը գումարիլ, այս հին սովորութիւնը փոխելուն մէջ դժուարութիւններ կը տեսնեմ. անոնք որ տեղւոյն հետաւորութիւնը պատճառ կը բռնէին, այդ պատճառներն արդէն վերցած է ժողովոյն նիստերը Ղալաթիա փոխադրուելով. երեսփոխան մը որ իւր յանձնառութեան գիրը կատարագրէ, եւ գիտէ կանխաւ

թէ ժողովն օր օր եւ ուր պիտի գումարուի, պարտի գալ եւ ներկայ գտնուիլ : Սակայն ժողովոյն նիստերը Ղալաթիա փոխադրուելէն ետքն ալ տակաւին շատեր կան՝ որ չեն ուզեր Ղալաթիա գալ. Ղալաթիա փոխադրուելէն ի վեր ցարդ մէկ անգամ միայն մեծամասնութիւն կրցինք ունենալ. ըսել է որ Երեսփոխանաց շատին չղալուն պատճառը տեղը կամ օրն չէ. ուրիշ պատճառներ ըլլալուն, որոց մէկ քանին դիտեմ արդէն : Կնչ եւ իցէ, ես կառաջարկեմ որ երրորդ յօդուածն ընդունինք նոյնութեամբ եւ անցնինք յաջորդին :

ՉԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեղեկագրին եզրակացութեան այս երրորդ կէտը քուէի դնելու հարկ չկայ, որովհետեւ ինչպէս Գարեգին էֆէնտի դիտել տուաւ, մեր ներքին կանոնաց մէկ տրամադրութիւնն է արդէն, որուն համեմատ ժողովը պիտի շարունակէ իր նիստերն 15 օրն անգամ մը ուրբաթ օրերն ընել :

Չերազ Գասպար էֆէնտի միայն անոր դէմ խօսեցաւ, բայց իրեն ուրիշ ձայնակից չունեցաւ : Եթէ ուրիշ առարկութիւն ընող չկայ, քուէի ալ հարկ չմնար, եւ կանցնինք չորրորդ կէտին :

Եւ Ատենապետ էֆէնտին տեսնելով որ երրորդ կէտին վրայ այլ եւս խօսք ուղող չըկայ, չորրորդ կէտին վրայ խօսիլ ուղողները կը հրաւիրէ խօսք առնուլ :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Կարծեմ լաւ կըլլայ եթէ այդ յօդուածը բարեփոխուի սապէս. « Առանց օրինաւոր պատճառի երեք անգամ շարունակ բացակայ եղող երեսփոխանին առնուելու Գիւանէն ծանուցանել ժողովին, եւ կոչնադրին մէջ ալ յատկապէս յիշեցնել իրեն որ երրորդ բացակայութիւն ունեցած է արդէն եւ երբ չորրորդ անգամ ալ բացակայ մնայ, հրաժարած պիտի հրատարակուի ըստ օրինի » :

Եթէ այս բարեփոխութեամբ չորրորդ յօդուածն ընդունուի, մինչեւ հիմա երեք եւ աւելի բացակայութիւն ունեցողներուն ըստ այնմ վերջին կոչնագիր մը կը դրկուի առ հասարակ, եւ յառաջիկայ նիստին չեկողներուն համար հրաժարեցուցման անօրինութիւն կըլլայ, եւ այն ատեն հինգերորդ յօդուածին ալ պէտք չմնար : Եղաւ ժամանակ՝ ուր բացառիկ արտօնութիւններ ալ դրուեցան ոմանց երեսփոխանաց. բայց ատոնք ընդհանուր կանոն չեն կրնար ըլլալ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. — Ասկէց առաջ Ս. Պատրիարքը բացակայից մասին կանոնին տրամադրած յօդուածը բարեփոխելու համար առաջարկութիւն մ'ըրած եւ Մայր դիւանն ալ ծրագիր մը բերած էր, որ կարծեմ ընդունուած եւ օրէնքի կարգ անցած է արդէն. ինչ է արդեօք այս նոր օրէնքին հինէն ունեցած տարբերութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մայր դիւանին բերած ծրագիրն ընդունուած չէ տակաւին ժողովէն. տարբերութիւնն ալ ուրիշ բան չէ, բայց եթէ կանոնին տրամադրած երեք բացակայութիւնը չորսի վերածել :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍ. — Կընդունիմ որ այդպէս լինի, ինչպէս որ Փատիագեան էֆէնտի ալ հիմա նոյնիմաստ առաջարկութիւն մը կընէ, բայց միմէ ստով դժուարութենէ պիտի ազատինք. յաջորդ նիստին դարձեալ բացակայութեանց խնդիր պիտի ունենանք եւ անով պիտի զրազինք : ժողովն իր նիստերը կանոնադրապէս ընելու համար պարտի իր ամբողջութիւնն ունենալ. բողոքութիւ երեսփոխանաց շարունակեալ բացակայութեանց պատճառաւ հետզհետէ հրաժարականներն ընդունուեցաւ, բայց տակաւին անոնց տեղ ոչ ոք ընտրուեցաւ. այս վիճակն անստանելի է. այս կերպով մեր մեր ձեռքը կ'ըստարանանք ժողովին գոյութեան : Ըստ խնդրելի չէ 8 կամ 10 անգամ բացակայութիւն ունեցողին դարձեալ զի-

ջում ընել. այլ այսօրու ընէ պէտք է հրաժարեալ ճանաչել այնպիսիներն եւ անոնց տեղ նոր ընտրութիւն կատարելու հրահանգը խնդրել սակից որ անկ է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Մտտիքէս եւ պիտիպտի առաջարկին կը ձայնակցիմ եւ կը կրկնեմ որ հրաժարեալ համարուին անոնք՝ որոց բացակայութիւնը մինչեւ հինգ վեց անգամի հասած է, եւ անոնց տեղ նոր ընտրութիւն փութով կատարուին : Թէպէտ եւ անոնց մէջ կան որ իմ բարեկամներս են, բայց քանի որ Ազգին գոյութեան բարեկամ չ'են, պէտք է հրաժարեցնել :

ԳՈՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ի դիմոյ Յանձնախումբին կ'ընդունիմ Փատիագեան էֆէնտի ի մասին չորրորդ յօդուածոյ առաջարկած բարեփոխութիւնն, որ օրինաւոր կը թուի ինձ, իսկ Մտտիքէս եպիսկոպոսի առաջարկն, որ ձայնակից ալ ունեցաւ, իրաւացի չեմ նկատեր, եւ իրր այն անընդունելի կը դատիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսից կարգին մէջ դեռ խօսք ուղղողներ կան, անոնց ալ խօսք սլտի տամ. սակայն տեսնելով որ խնդիրն իր ուղղութենէն կը խտորի. եւ կարելի չէ այս վիճակին մէջ զիւրութեամբ բաժնան մը յանգիլ, հարկ կը համարիմ երկու խօսքով վիճարանութիւնն ամփոփել եւ պարզել թէ ի՞նչ է այսօրուան որոշելիքնիս :

Օրէնք մ' ունինք որ բացակայութեան համար չորս բանաւոր պատճառ կը սահմանէ եւ առանց այն պատճառներու երրեակ բացակայութիւն ունեցողը հրաժարեալ կը համարի. տեղեկագիր մ'ունինք այժմ որ բացակայութիւնը չորրորդի կը վերածէ եւ բանաւոր պատճառ կ'ընդունի հիւանդութիւն, ճամբորդութիւն եւ յատենի ժողովոյ քութիւնն ընդունուած անդիմադրելի արգելքները :

Արդ՝ այս երկուքին տարբերութիւնն է վիճարանելի բուն կէտը : Կողաչեմ որ Չերազ քերն անոր վրայ ամփոփէր :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Գափամանեան էֆէնտի յանուն Յանձնախումբին Յայտարարեց թէ օրինաւոր կը գտնէ Փափազեան էֆէնտի առաջարկած բարեփոխութիւնը . նոյնպէս ևս այլ իմ մասին բանաւոր կը գտնեմ ևս կը հաստատեմ զայն :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Արդէն օրէնք մը ունինք որ կը տիրէ . քանի որ նորը չէ ընդունուած , պէտք է հին օրէնքը գործադրենք , մինչև նորը հաստատուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ օրէնքն անգործադրելի եղած է , և այս մասին ոչ մէկու գէ՛մ գանձատելու իրաւունք չունինք , վասն զի նոյն իսկ մեր շուղեցիներ գործադրել զայն : Այդ օրինաց տրամադրութիւնը քանիցս խնդրոյ նիւթ եղաւ այս ատենին մէջ , զանազան ձեւերու սակ , և ժողովն անոր ճշդիւ գործադրութիւնը պատշաճ չդատելով գրեթէ միշտ յետաձգեց : Վերջապէս այսօր այդ օրինաց զօրութիւնը կարուած ըլլալով , տեղը նոր մը սահմանելու համար Յանձնախումբ մը կարգած էր ժողովս , որ իւր տեղեկագիրը մատուցած է և այս պահուստ ալ առաջին խնդրոյ նիւթն այն է : Արեւմտեան պէս բաւական չէ հին օրէնքին գործադրութեանն հետամտելու :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Անէինք օրէնք մը բացակայից մասին , բայց այսօր չունինք , 4, 5 և 6 անգամ բացակայ եղողներն որ ըստ օրինի հրատարակու համարելի էին , ոչ միայն չհրատարակուցինք , այլ նաև , ինչպէս պարզեց Ատենապետ էֆէնտին , Յանձնախումբ մը դրինք որ ճրագիր մը բերէ թէ ի՞նչ ընել պէտք է այս մասին . երեք անգամ չեկողները ինքզինքնին ըստ հին օրինաց հրատարակու համարելով չեկան , բայց մեք անոնց հրատարակու չէր ըսինք և կոչնագիր դրուեցինք . որով շատերն իբր երեսփոխան նորէն եկան բողոքեցան իրենց ամբաստան վրայ , շինա մեր ցանկին մէջ 33 երեսփոխան կայ կըսուի , հրատարակուցուելու վիճակին մէջ :

ասի ծանր կէտ մ'է , և անմիջապէս գործադրելի չթուիր ինձ . վասն զի քանի որ մինչև ցարդ կոչնագիր կը դրինք անոնց և հրատարակու վիճակի մէջ չենք նկատեր , կերպով մը մեր արտօնութիւն տուած կը համարուինք իրենց բացակայութիւնին շարունակելու . երբ փափազեան էֆէնտի առաջարկածին պէս վերջնական կոչնագիր մը դրինք անոնց , և ըսենք թէ 4 րդ անգամուն հրատարակու պիտի նկատուի , բան մը կորսնցուցած չենք ըլլալ . այն թողտուութիւնը զոր մինչև ցարդ ըրած ենք , մէկ անգամի համար ալ կրնանք ընել : Այս է իմ կարծիքս :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ժողովը կը յիշէ թէ երբ Յանձնախումբը կազմուեցաւ , օրէնք մը կար արդէն որ կը տրամադրէր թէ 3 անգամ շարունակ բացակայ եղող երեսփոխանն հրատարակու համարուի . սակայն ժողովը նկատելով որ անգործադրելի մնացած էր այդ օրէնքը , Յանձնախումբին համար սահմանած պաշտօններէն մէկն ալ այդ ըրաւ թէ ի՞նչ ընել պէտք է շարունակելու բացակայութիւն ունեցողներուն համար : Եթէ հին օրէնքը գործադրելութեան մէջ լինէր , ժողովը չէր տար Յանձնախումբին այնպիսի պաշտօն մը և չէր ըսեր որ այս ալ քննէ թէ ի՞նչ ընել պէտք է : Առաջիկայ ևս ալ կառաջարկեմ ըստ Եռասփեան էֆէնտի , մէյմէկ վերջնագիր դրիւք բացակայից , և եթէ դարձեալ անպատասխանի թողուն , այն ատեն հրատարակու համարել :

ՁԱՅՆԵՐ. — Բուէ , քուէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէտք կը տեսնեմ դարձեալ յիշեցնելու թէ մեր քուէարկելիքը տեղեկագիրն չորրորդ եղրակացութիւնն է : Մեր կանոնը բացակայութեան համար երրորդ անգամը վերջին կը սահմանէ և բացակայութեանն օրինաւոր պատճառ չորս հատ ցոյց կուտայ . իսկ Յանձնախումբն այն չորսէն երկուրը միայն տուեր և անվիճարելի արդելին

յուրեղներով փոխանակ երրորդի՝ չորրորդ անգամը վերջնական համարիլ կառաջարկել իւր տեղեկագիրն եղրակացութեան չորրորդ կէտին մէջ : Ձեր քուէն Յանձնախումբին այս առաջարկութեան համար պիտի տար այժմ :

Այս առթիւ ժողովոյդ ուշադրութիւնը հրաւիրել կուզեմ սա պարագային վրայ թէ՛ մեր ներքին կանոնին խմբագրութեան ատեն՝ բացակայութեան բանաւոր պատճառ թէ՛ եւ չորս հատ միայն յիշուեր և անցեր են կանոնին տրամադրութեանց մէջ , սակայն փորձը ցոյց տուեր է յետոյ թէ ուրիշ բանաւոր պատճառներ ալ կրնան եղեր երեսան գալ , մանաւանդ այս քաղաքին մէջ : Օրինակի համար , ժողովի օր մ'ինձ պատահեցաւ որ կղզիէն իջնողը անկարելի եղաւ , վասն զի ծովուն սաստիկութեան պատճառաւ շոգենաւ չկրցաւ մերձենալ : Եթէ ևս արդէն երկու բացակայութիւն ունեցած լինէի , այն օրն իմ պատրաստականութեանս հակառակ երրորդ բացակայութեան հետեւանքը պիտի կրէի : Կը թուի թէ ճիշդ այս կարգի սրատահանութեանց համար է որ Յանձնախումբն՝ անդիմադրելի արդեւքը ընդունիլ ուզելու է բանաւոր պատճառաց կարգին մէջ :

Արդ որովհետեւ քուէ ձայնեցին , այս կակրճ բացատրութենէն յետոյ վիճարանութեան փակումը քուէի պիտի դնեմ :

Եւ Ատենապետ էֆէնտին վիճարանութեան

փակումը քուէի դնելով , ժողովը 5 քուէի գէ՛մ 12 քուէով կընդունի և ԿՈՐՈՇԷ՛ վիճարանութիւնը փակել :


ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ Տեղեկագիրն չորրորդ եղրակացութիւնը պիտի քուէարկէք . առաջին նախ ըստ օրինի՝ Փափազեան էֆէնտի կողմէ այս մասին ներկայացուելու բարեփոխութեան վրայ , որ կրկնողներ ունեցաւ , ձեր ձեւամարտ քուէն կը խնդրեմ :

Այս միջոցին 24 երեսփոխանք միայն ներկայ էին որոցմէ 22 ձեռք ամբարձան եւ Մ. Գափամանեան ու Գ. Ձերազ էֆէնտիները ձեռնարկ գտնուեցան :


Հետեւապէս Ատենապետ էֆէնտին՝ որ չունի ըստ օրինի չեղեալ յայտարարելով , ծանոց որ յաջորդ նիստին կը մնայ տեղեկագրի չորրորդ եղրակացութեան որոշումը :

Յաջորդ նիստը 8 օրէն գումարելու որոշմամբ Ատենապետ փակուեցաւ ժամը 10 1/2 ին :

Ատենապետ	Ատենապետ
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ	Յ. ՄԷՐԵՇԷՄ-ԳՈՒԼԻ



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



REPORT OF THE

COMMISSIONERS OF THE

- 1. The Commission has the honor to acknowledge the receipt of your report of the 1st inst.
- 2. The Commission has the honor to acknowledge the receipt of your report of the 1st inst.

REPORT

- 1. The Commission has the honor to acknowledge the receipt of your report of the 1st inst.
- 2. The Commission has the honor to acknowledge the receipt of your report of the 1st inst.

THE

COMMISSIONERS OF THE

COMMISSIONERS OF THE

Faint text at the bottom of the page, possibly a signature or date.

# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն նախընթաց է. նիստի Ատենագրութեան
2. Սեբաստիոյ Թուղլասար գիւղի պանդուխտ ժողովրդեան հանրագիրը :

## ՕՐԱԿԱՐԳ

- Ա. Հրաժարում Մայր գիւանի անդամոց եւ ընտրութիւն .
- Բ. Խնդիր տեղափոխութեան եւ բացակայութեան երեսփոխանաց . — Տեղեկագիր Յանձնախմբին :

## Գիւն 2 դրոշ

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

### ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵՄԽՈՒՅ ՅՍՏԿԱՑԵԱԼ

Կը ծախուի ի Գիւանաստան Պատրիարքարանի Է. Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ  
Եկեղեցւոյ բանկայլ Է. Հայ գրավաճառաց բով